ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

Հոկտեմբերի 23

Հաշւատեսական ժողովը շատ չարչարվեցաւ, բայց Վանցեանի մանր մունր թղթերից չը կարողացաւ մի բան հասկանալ, կամ որ և իցէ մի հաշիւ կազմել։ Այդ պատճառով մի քանի անգամ հրաւիրից պ. Յովհաննէս Վանցեանին, որ գայ և ինքը թղթերը կարգաւորէ և հաշիւ պատրաստէ, բայց Վանցեանը առանց ուշադրութիւն դարձնելու հաշւատեսների հրաւէրին՝ չը ներկայացաւ, և մինչև այսօր փախչում է հաշիւ տալուց։ Հաշւատեսական ժողովը ուրիշ միջոց չունենալով այս յուսահատ դրութիւնից դուրս գալու, դիմեց հոգևոր իշխանութեան օգնութեանը։

Մինչև հոգևոր իշխանութիւնից պատասխան ստանալը, հաշւատեսական ժողովը հոգևոր կառավարութեան անդամների և սրբազան յաջորդի ներկայութեամբ սկսեց քննել ս. փրկիչ եկեղեցու աւագ պահարանը, որովհետև այդտեղ են պահվում բոլոր եկեղեցական սրբազան իրեղէնները, և այդ պահարանն էլ Վանցեանին էր յանձնված առանձին ցուցակով։

Պէտք է ասած, որ Ախալցխայի ս. փրկիչ եկեղեցին, ս. էջմիածնից յետոյ, կարելի է ամենահարուստը համարել կովկասի ուրիշ հայ եկեղեցիների հնութիւնների և թանգագին զարգերի կողմից։ Միայն արծաթեղէնների քաշը հասնում է մինչ 16 պուդի։ Այդ եկեղեցումն են հաւաքված կարինոյ նահանգի հայ եկեղեցիների հարստութիւնները, որ գաղթականները բերին Ախալցխա, Կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ։—Դժուար է այստեղ մի առ մի յիշել բազմաթիւ գրչագիր մագաղաթեայ աւետարանները, աստուածաշունչները, այսմաւուրքները և այլ զարմանալի հնութիւնները, որոնք կարող էին առատ նիւթ լինել Թիֆլիսի հնագիտական ժողովին՝ եթէ Ախալցխան ևս ուրիշ քաղաքների նման բաղդ ունենար այդ գիտնական պրոֆեսօրների ուշադրութեան արժանանալու։ Բայց ինչ արած, որ հայերիս բնական յատկութիւնն է պարծենալ օտարների առաջ մեր ունեցածով, իսկ մենք ընդունակութիւն չունենք նրանց հետ վարվել ինչպէս որ պէտք է։

Ինչպէս վերևումն ասացինք, այդ պահարանը յանձնված էր Վանցեանին, այս վերջինս էլ յանձնել էր Աբրահամ քահանայ Ղազարեանցին, և սրա համար պ. Վանցեանը, հակառակ հոգևոր կառավարութիւնից ստացած հրամանին, ոչ մի անգամ ներկայ չը գտնվեցաւ պահարանի քննութեան ժամանակ և բոլոր պատասխանատւութիւնը ցցեց Աբրահամ քահանայ Ղազարեանցի վրա։ Հինգ տարի է, որ յիշեալ քահանան է կառավարում այդ պահարանը և չենք կարծում թէ այդ հինգ տարվայ մէջ գոնէ մի անգամ կանոնաւորած և մաքրած լինի։ Խղճալի է տեսնել և այս բօպէիս թէ ինչ անշուք վիճակումն են գտնվում վերոյիշեալ պատկառելի հնութիւնները։ Ամենքն էլ դէս ու դէն խառնիխուռը վեր ածած, ծածկված աննկարագրելի փոշիով, այնպէս որ շատ ուխտաւորներ ստիպված են իրանց թաշկինակներով մաքրել համբուրելու ժամանակ։ Զարմանում ենք Աբրահամ քահանայի այդ վարմունքի վրա. չէ որ ինքն էլ ամեն ուխտաւորից իր բաժինն է ստանում, խօ ձրի չէ ծառայում, որ այսպէս բարձի թողի է արել յիշեալ պահարանը։

Հաշւատեսների ժողովը նախ և առաջ քննեց այն իրեղէնները, որ ստացել էր հայր Ղազարեանցը առանձին ցուցակով։ Այդ քննութեան հետևանքի մասին խօսել ուրիշ անգամի թողնելով, առ այժմ հարկաւոր եմ համարում ուշադրութեան առնել հետևեալ հանգամանքը։

Այդ պահարանն էլ մի առանձին եկամուտի աղբիւր է մեր եկեղեցիների համար թէ նոյն պահարանում դրված գանձանակներից և թէ սըրբոց մասունքների համար ժողովրդից ստացված ընծայաբերութիւններից։ Այդ ընծայաբերութիւնները լինում են զանազան տեսակ, այսինքն ոսկեայ և արծաթեայ խաչեր, մատանիներ, տաճկական ոսկի դրամներ (ուռուպեայ, քսաննոց և այլն, որ առհասարակ Ախալցխայի հայ կանայք պոկելով իրանց զարդերից նուիրում են սրբոց մասունքներին, կամ պատկերներին) կերպասեղէններ, մէկ խօսքով ինչ որ կարելի է ընծայել եկեղեցուն։ Այս ամենը հոգևոր կառավարութեան բառերով կոչվում են «յաւելեալ իրեղէնք»։ Նախկին տարիներում այդ յաւելեալ իրեղէնների համար, իւրաքանչիւր եկեղեցու մէջ տրվում էր վաւերացած ցուցակ, և այդ ցուցակի մէջ գրվում էր թէ ընծայված առարկան և թէ ընծայողի անունը և տարվայ վերջը այդ իրեղէնները հաւաքվում էին ս. փրկիչ եկեղեցու պահարանը և ապա հոգևոր կառավարութեան, երեցփոխանի և մի քանի անձանց գիտութեամբ այդ իրեղէնների միջից ջոկելով նշանաւորները անցկացնում էին մայր մատեանի մէջ, իսկ աւելորդները վաճառում էին յօգուտ եկեղեցու։ Այս հինգ տարվայ ընթացքում չերևեցաւ այդպիսի ցուցակ, բացի մի քանի կտոր թղթերից, որոնց վրա հայր Ղազարեանցը այնքան է նշանակել, ինչքան որ իրան ձեռնտու է եղել։ 1879 թուականում աւելացած իրեղէնների ցուցակ ամենևին չը կայ. ով կարող է իմանալ թէ այդ թուականում ինչքան ընծայաբերութիւնք են եղել մեր երեք եկեղեցիներում։ Այնու ամենայնիւ երբ հաշւատեսների ժողովը պահանջեց նրանից իր ցոյց տուածի համաձայն ոսկի խաչեր, մատանիներ, դրամներ և այլն, պատուելի քահանան պատասխանեց, որ այդ ամենը յանձնել է երեցփոխան Վանցեանին, բայց մոռացմամբ նրանից ստացական չէ առել, այն էլ հինգ տարվայ ընթացքում։— Դուցէ աւելորդ լինի երկար գրել այս մասին. այսքան ասենք թէ ինչպէս որ Վանցեանն էր վարվել եկեղեցական կայքերի հետ, նոյն ձևն է բռնած և հայր Ղազարեանցը պահարանի վերաբերութեամբ. կարծես այդ երկուսը միմեանց մէջ խորհուրդ արած լինէին։ Անցածը անցել է, պէտք է աշխատել, որ այսուհետև այդպիսի խայտառակութիւններ չը պատահեն և իմ կարծիքով դրանց առաջն առնելու համար անշուշտ հարկաւոր է դնել իւրաքանչիւր եկեղեցում ժապաւենած ստացականների գրքեր և պատուիրել ժողովրդոց, որ ընծայաբերութիւն արած ժամանակ անպատճառ պահանջեն ստացականներ։ Թէ սրբազան Սագինեանցի և թէ Ախալցխայի հայ հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրում ենք այս բանի վրա։

Հ. Վ. Գ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

20 Հոկտեմբերի

Երևանում ամենայն բաւականութեամբ կարդացվեցին «Մշակի» յօդուածները էջմիածնի ճեմարանի վերաբերութեամբ։ Թէև խուսափումների բուռն կաշվից դուրս է գալիս հակառակը ապացուցելու համար, ջանահնար է լինում «Մշակի» ասածները ջրել, բայց արդէն ուշ է. էլ չեն կարող ընթերցողներին մոլորեցնել... Մենք—երևանցիներս— մօտ ենք էջմիածնի ճեմարանին. մենք լաւ գիտենք թէ որքան էլ [illegible] հնարեն, այնու ամենայնիւ չեն կարող ծածկել այն որ ազնիւ չէ, շնորհակալութեան արժանի համարել այն, որ վնասակար է, որ խարդախութիւն է.... Թող որքան կամին ճռճռան ֆրազների տակ աշխատեն ծածկել ճշմարտութիւնը. մենք թողնում ենք այդ ամբոխին մի կողմ և դառնում ենք բանիմաց ընթերցողներին։

Թող ուրիշները ինչ կուզեն—ասեն. մենք կասենք այն— և կաշխատենք ապացուցել— ինչ որ ճշմարիտ է. ինչ որ լսել ենք մեր ականջով այդ քայլը անողի բերանից, ինչ որ պարզ երևակայելի է իրողութիւններից։ Մի որ և իցէ Նահապետեանին 5700 ր. (700 ր. ճանապարհածախսի հետ) և ուրիշներին էլ 4000—3000 ր. ռոճիկ տալը «անկարծ» առեղծվեց և այն ժամանակ,—երբ ճգնաժամ կարելի էր անուանել Մանկունու համար, այն ժամանակ երբ մամուլը ամեն կողմից ազդարկեց նրա արածների դէմ, երբ կանչում էր ազգայիններին, հրաւիրում էր նրանց գալ, խմբվել էջմիածին, միաբան եպիսկոպոսներից հաշիւ պահանջելու։ Այդ ժամանակ միայն Մանկունին հնարեց այդ զգուելի բանը և ուղղակի նրա համար, որ թէ գրգռված հասարակութեանը և թէ մամուլին տայ խօսելու, խորհելու և զբաղվելու մի այնպիսի նիւթ, որ պահ մի մոռանան հարիւրաւոր տիրացուները, ոսկեկուռ մատանիները, անդամանդները, խաչերը, շուրջառները, պարգևաբաշխութիւնները և այլ հազար ու մի տեսակ գործերը։

Զգտում են համոզել, որ էջմիածնի ճեմարանը հարուստ է, ապահովված է, (ուրեմն թող միամտավի ազգը, որ նուիրած կոպէկն անգամ չէ կորած), և այս տարի առաջին քայլն է անում յառաջադիմութեան—ուսուցիչներին մեծ ռոճիկներ տալու։ Դրանք թող ի նկատի ունենան հետևեալը։ Մենք ինքներս անձամբ տեսանք էջմիածնի տպարանում «ընկալագիր» վերնագրով տոմսակներ—ճեմարանին 10—25 ր. տարեկան միանուագ նուէրներ տալու համար։ Հետաքրքրվեցինք և իմացանք, որ ճեմարանի այս տարվայ ծախսերը լցնելու համար եկամուտից պակասում է 20,000 ր.։ Ահա այդ պակասը լրացնելու համար է, որ ստեղծել է Մանկունին այդ «ընկալագիրը» դարձնել խեղճ ժողովրդին դիմելու—ժողովրդի վրա տարածելու գիտաւորութեամբ։ Իսկ եթէ ազգայինք չը տան, ճեմարանի դրամագլխից պիտի լրացնվի պակասը։ Ուրեմն ճեմարանը իր կարողութիւնից վեր ծախսեր անելով առաջին քայլն արեց իր դռները փակելու և ահա թէ ինչու։ Նա բարձրացնելով միանգամայն ուսուցիչների ռոճիկը, այսուհետև այլ ևս չէ կարող պակասացնել, իսկ այդքան էլ վճարելու միջոց չունի։ Ամեն հասարակութիւն իր անապահով դպրոցն ունի, նրան էլ է պարտական։ Ճեմարանը պահելու համար պէտք է արգիւք փակել—ջնջել միւս դպրոցները։ Ուրեմն ինչ եղև է մնացել։ Եղբի համար շատ երկար մտածելիք չունի նրա այժմեան հոգատար Մանկունին. նրա դէվիզն է «մեզնից յետոյ թող ջրհեղեղ լինի»։ Հետևապէս նա մտածում է միայն եղած չղամբը իրան օրով գործ դնել, ամեն բան շռայլ ու շքեղ անել, որ իրանից յետոյ ամեն բան կործանվի և այդպիսով երբ թէ իրան օրերը ոսկէ դար համարվեն, անմոռաց մնան։

Գանք ուրիշ կէտերին. էջմիածնի ճեմարանը այսօր ույժ ունենալով գիտուք խլում է ուրիշ դպրոցների եկամուտը, ենթադրենք թէ, և նրանց արժանաւոր տեսուչներին։ Սրանով չէ հարուստանում արդեօք մեր միւս դպրոցներին։ Ճեմարանը տարեկան մօտ 70—80.000 րուբլ վատնելով, ինչ օգուտ է տալիս և ինչ օգուտ կարող է տալ ազգին։ Նրա մէջ աւարտածները ինչ ուղղութեան, ինչ հանճարի, ինչ հասկացողութեան տէր անձինք պիտի լինեն,—չէ որ, ինչքան էլ բարձր լինեն, իրանց ուսուցիչներից բարձր չեն լինի և վերջապէս տարեկան քանի հոգի կարող են աւարտել, որ օգուտը համեմատ լինի այն ահագին ծախսերի հետ։

Այս 80,000 մանէթով տարեկան 150—160 հոգի կարելի է պահել արտասահմանի զանազան դպրոցներում, որտեղից դուրս կը գան, ոչ թէ Նահապետեանի բէկոփոտութեան տակ եղած աշակերտներ, այլ և գուցէ Նահապետեանի պէտները տեսչութիւն անող անհատներ։ Ճեմարանը իր հիմնված օրից մինչև այսօր, ինչ էք կարծում,— որքան տասնեակ հազարներ վատնած կը լինի և որքան ուսումնատարտ աշակերտներ տուած կը լինի։ Ահա արդէն իններորդ տարին է, որ գոյութիւն ունի ճեմարանը. եթէ ենթադրենք միջին թւով 20,000 ր. տարեկան ծախս անցեալ ժամանակներում,— կանէ 180,000 ր. և այս ահագին գումարը ինչ է տուել ժողովրդին.... Հա, դեռ յետոյ պիտի տայ—լաւ։ Տեսնենք։

Վրոյր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կարդացինք «Մեղու Հայաստանի» լրագրում մի լուր Վաղարշապատից, որ Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան աքսորված է Խորվիրապ։ Բայց մեզ հաղորդում են նոյն տեղից մի լուր, որից եզրակացնում ենք որ «Մեղուի» թղթակցի յայտնած լուրը ստոյգ չէ։ Մեզ գրում են որ Բարդուղիմէոս վարդապետ թէպէտ և էջմիածնում չէ, բայց և Խորվիրապումն էլ չէ։

—

„Одесскій Листокъ" լրագրում կարդում ենք, որ այս օրերս Օդէսսայում քննվեցաւ դատարանում մի շատ զարմանալի գործ։ Մի կին, հասարակ ժողովրդից, մեղադրվում էր նրանում, որ թողնելով իր մարդուն, առանց ապահարզան ստանալու, պսակվեցաւ մի այլ մարդու հետ։ Դատարանը քննելով այդ վարմունքի շարժառիթները, արդարացրեց կնոջը։

—

ԵՐԵՒԱՆԻՑ. Վահան քահանայ Տէր-Յովհաննէսեանց խնդրում է մեզ տպել հետևեալը։ «Ազգօգուտ լրագրի 148 համարի մէջ պ. Նորայրը ի միջի այլոց, չհղվելով ճշմարտութիւնից, յարձակվում է իմ պատւի դէմ, գրելով որպէս թէ «հասկացող նորգեցիներից ոմանց յարաբերութիւնը փոխվել է դէպի տէր Վահան հայրը», իմ դէմ այս գրած տողերին ես կը պատասխանեմ հետևեալը։ Ամեն մի անձ կտրվի իր շրջապատողներից երբ ապօրինութիւն է գործել, երբ մեղանչել է հասարակաօգուտ գործի դէմ, երբ անարգ ընթացք է ունեցել, երբ իր պարտականութիւնների մէջ ծոյլ է հանդիսացել և այլն. Արդեօք ո՞ր յանցանքիս, ո՞ր անվայել պաշտօնավարութեանս, կամ արարմունքներիս համար Նորգի բնակիչները փոխել են իրանց յարաբերութիւնը դէպի իմ անձնաւորութիւնը։ Թող ցոյց տայ պ. Նորայրը։ Ընդհակառակն, որքան նկատում եմ, ժողովուրդը սերտ սիրով կապված է մնում ինձ հետ, որովհետև որչափ կարողութիւնս եղել է, միշտ աշխատել եմ սրբութեամբ կատարել քահանայական և ուսուցչական պարտականութիւններս, ժամանակի պահանջմունքներին համաձայն և միշտ ցանկացել եմ սիրելի ժողովրդին առաջադիմութիւն և բարոյական ու մտաւոր կրթութիւն։ Այդ բոլորը կարող են վկայել ոչ թէ միայն նորգեցիները, այլ քաղաքիս այլ թաղերի բնակիչներից շատերը, որոնց լաւ ծանօթ են Նորգի դրութեան անցեալ և ներկայ հանգամանքները»։

—

Մեզ հաղորդում են Մեղրի գիւղից թէ այս օրերս թուրք աւազակներ, որոնցից մինին արդէն կալանաւորեցին, սպանեցին Մեղրի-Օրդուբադեան ճանապարհի Շահ-Դաշ անուանված կիրճում երկու հայ գիւղացիներին, որոնք Օրդուբադից դառնում էին դէպի տուն, իրանց վաճառած ոչխարների փողերը իրանց հետ բերելով։ Սրանցից մէկին սպանեցին հրացանով, իսկ միւսին դաշոյնով։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Տեղիս երիտասարդները պատրաստվում են մի հայոց ներկայացումն տալ յօգուտ «Փուրնեայ դ'Օրեան» լրագրի։ Բայց ինչ անենք, որ սիրողների ներկայացման եկողներից շատերը փողեր չեն վճարում։ Եթէ սիրողները իբրև քաղաքավարութիւն, վաղօրօք տոմսակները չուղարկեն առանձնապէս, հաւատացած կարող էք լինել որ մի հատ տոմսակ անգամ չի ծախվի։ Իսկ երբ նրանց ուղարկվում են տոմսակներ, այն ժամանակ, ինչպէս սիրողները պատմում են, նրանց յետ են դարձնում այդ տոմսակները, զանազան հայհոյանքներով լի նամակներով միասին։ Եթէ այդ վայրենի վարմունքը դէպի ազգային թատրոնը շարունակվի, այլ ևս ոչ ոք չի համաձայնվի բեմ դուրս գալ իբրև սիրող, մանաւանդ մեր տիկիններից և օրիորդներից»։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ ռուս երևելի վիպասան Տուրգենեվ պատրաստում է տպագրութեան համար մի նոր րօման Ռուսաստանի ներկայ հասարակական կեանքից։

—

Երկու երիտասարդներ խնդրում են մեզ տպել հետևեալը։ «Ի տեղեկութիւն մեր գրականութեամբ պարապող անձանց յայտնում ենք, որ մենք արդէն թարգմանել ենք «Жизнь Тома Едварда» մանկական վէպը, որ շուտով մամուլի տակ կը մտնի»։

—

Կ. Պօլսից մեզ գրում են, խնդրելով մեզ որ բաց անենք մեր լրագրի էջերում հանգանակութիւն Երուսաղէմի հայոց վանքի համար, որ ահագին պարտքերի մէջ է ընկած։ Զարմանալի բան. այդքան հարուստ վանք և միշտ պարտքերի մէջ ընկած։ Բայց ցաւագործաբար պէտք է խոստովանվենք յիշեալ նպատակի համար հանգանակութիւն առաջարկողներին, որ մենք «Մշակի» էջերում վանքերի համար սովորութիւն չունենք հանգանակութիւններ անելու, մանաւանդ երբ վանքը Հայաստանի հողի վրա էլ չէ գտնվում, որ կարողանար անմիջական օգուտ տալ իրան շրջապատող ազգաբնակութեանը, կամ նիւթապէս նրան օգնելով, կամ դպրոց հիմնելով և այլն։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Մեր հոգևոր ուսումնարանը, որ ամբողջ վիճակի միակ ուսումնարանն է, շատ ողորմելի դրութեան մէջ է գտնվում թէ նիւթական և թէ ուսումնական կողմից, շնորհիւ անզօրծ, թոյլ հոգաբարձուների և տգէտ ուսուցիչների։ Հայերի մեծ մասը, այդ պատճառով, տալիս են իրանց զաւակներին ռուսաց ուսումնարանը, որ արագ քայլերով առաջ է գնում և փոքր ի շատէ զարգացած ուսումնաւարտներ է տալիս հասարակութեանը»։